«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 14.08.2018թ. ժամը 17:00

Համաձայն Կարեն Մխոյանի ներկայացուցիչ Դիաննա Անտոնյանից , «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.07.2018թ-ին ստացված դիմումը քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ u/թ-ի Օգոստոսի14-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ Կարեն Մխոյանի ներկայացուցիչ Դիաննա Անտոնյանը
Քաղաքացի քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ Կարեն Մխոյանը և ներկայացուցիչ Սաթիկ Ղիմոյանը
Քաղաքացի քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
Կարեն Մխոյանի ներկայացուցիչ Դիաննա Անտոնյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.07.2018թ-ին ստացված դիմումը քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի նկատմամբ «ԿՀ գործու նեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը առաջարկեց հստակեցնել այն հարցը, թե արդյոք կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր կան:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը ճշգրտեց այն հանգամանքը, որ դիմումատուն մատնանշում է սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 57-րդ հոդվածների խախտումները:

Սնանկության գործով կառավարիչ՝Ա.Կարակեչյանը մասնավորապես նշեց,որ իր կատարած գործողությունները բխել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ և 47-րդ հոդվածի պահանջներից և որ սնանկության գործով կառավրչի կողմից օրենքով սահմանված պարտականությունների և իրավունքների իրացումը չի կարող մեկնաբանվել որպես ի օգուտ կամ ի շահ պարտապանի կամ պարտատիրոջ կատարված գործողություններ:

Նշեց նաև, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018թ. որոշման դեմ վճռաբեկ բողոքի առկայության պայմաններում ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը դեռևս չէր մտել օրինական ուժի մեջ, ուստի թիվ ԿԴ1/1271/02/17 վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելիս Ալեքսանդր Կարակեչյանը հանդիսացել է նաև Անահիտ Անանյանի սնանկության գործով կառավարիչ:

Սնանկության գործով կառավարիչը նշեց նաև որ Արմեն և Անահիտ Անանյաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ 31.08.2017թ-ի ԵԿԴ/0171/04/17 վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018թ-ի կայացրաց որոշումը մտել է ուժի մեջ 25.02.2018թ-ին:

Պարտապանի գույքի գույքագրում կատարվել է՝ 11.12.2017թ-ին:

Հանձնաժողովի անդամ Մ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը, որ խիստ սուբյեկտիվ է գույքագրման ժամկետները և իր կարծիքով գույքագրման խախտում առկա չէ: Առաջակեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը նշեց, գույքագրման ժամկետների խախտում առկա չէ,քանի որ համաձայն «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի. ***-Պարտապանին սնանկ ճանաչելու մասնի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝30-օրվա ընթացքում,կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի գույքագրում:*** Տվյալ դեպքում ինչպես պարզվում է Վճիռը օրինական ուժի մեջ է մտել 25.02.2018թ-ի իսկ կառավաիչը գույքագրումը իրականացրել է 11.12.2017թ-ին,դեռ ավելի վաղ:

Հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը նշեց, որ իր կարծիքով կարգապահական և օրենքի որևէ խախտում չկա:

Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ հիմնականում անգործության մեղադրանքներին ապա դրանք չեն կարող համապատասխանել իրականությանը, քանի որ կառավարչի կողմից կազմակերպված է գույքի գույքագրում:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Ա.Կարակեչյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 56-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով,իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել, ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը նույնպես համաձայնեց մնացած անդամների կարծիքի հետ և ավելացրեց,որ դիմումատուի բողոքի պատճառ դարձած՝ք.Հրազդան,Հատիսի փող.1/37 հասցեյի անշարժ գույքի նկատմամբ,սնանկության վարույթում սեփականության իրավունքի ճանաչումը,կառավարչի կողմից բողոքարկվել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 47 րդ հոդվածի հիմքով,որպես սնանկության վարույթի կազմի մեջ մտնող գույքի բաղկացուցիչ մաս կազմելու հիմքով,բացի դրանից այդ գույքը պատկանել է երաշխավոր Անահիտ Անանյանին իսկ նա պարտապանի օրինական ամուսինն է և գույքն էլ հանդիսանում է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված:

Իսկ կառավարչի Վերաքննիչ բողոքը հիմնված է եղել դատարանի ընդհատությանը,իպիսի հիմքով էլ դիմումատուի սեփականության իրավունքը ճանաչող վճիռը բեկանվել է:

Նշված հիմքերից ելնելով իր կարծիքով նույնպես հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Չեռնպահ – 0

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին որ խախտումների առկայության քննության և փաստացի հանգամանքների ճշտման համար հարկավոր է հարուցել կարգապահական վարույթ:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
Կարեն Մխոյանի ներկայացուցիչ Դիաննա Անտոնյանից ,«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.07.2018թ-ին ստացված դիմումի հիմքով, քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում նշված հանգամանքները, քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց դիմումատու Կարեն Մխոյանին: Վերջինս ներկայացրեց հակիրճ բողոքը, նշեց, որ Վահագն Մուրադյանը դիմել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ Արմեն և Անահիտ Անանյաններին սնանկ ճանաչելու դիմումով: 20.07.2017թ-ին Ալեքսանդր Կարակեյանը նշանակվել է սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ: 31.08.2017թ-ի ԵԿԴ/0171/04/17 վճռով դիմումը բավարարվել է: Ալեքսանդր Կարակեյանը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել պատասխանողներ Արմեն Անանյանը և Անահիտ Անանյանը: 25.01.2018թ-ին բողոքը բավարարվել է մասնակի՝ Անահիտ Անանյանին սնանկ ճանաչելու մասով բեկանվել և փոփոխվել, Վահագն Մուրադյանի դիմումը՝ Անահիտ Անանյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, մերժվել է: 06.12.2017թ-ին թիվ ԿԴ1/1271/02/17 վճռով՝ Կոտայքի մարզի Հատիսի փողոցի թիվ 1/37 խանութ հասցեի նկատմամբ ճանաճվել է Կարեն Մխոյանի սեփականության իրավունքը:
Կարեն Մխոյանը գտնում է, որ Ալեքսանդր Կարակեյանը սույն գործով միտումնավոր դրսևորել է անգործություն, օրենքով սահմանված ժամկետում չի կատարել պարտապանի գույքի գույքագրում, այն պարագայում, երբ պարտապանի անվամբ բավարար գույք է գրանցված և նշված գույքի իրացմամբ կարող էր կատարվել պարտատեր Վահագն Մուրադյանի հանդեպ ունեցած պարտավորությունը, իր ամբողջ ուշադրությունը սևեռել է միայն Կարեն Մխոյանին պատկանող Կոտայքի մարզի Հատիսի փողոցի թիվ 1/37 խանութի վրա:
ԿԴ1/1271/02/17 վճռի դեմ Ալեքսանդր Կարակեյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել որպես Արմեն Անանյանի և Անահիտ Անանյանի սնանկության գործով կառավարիչ, այն դեպքում երբ վերաքննիչ դատարանը Անահիտ Անանյանի մասով վճիռը բեկանել էր և մերժել էր Անահիտ Անանյանին սնանկ ճանաչելու դիրմումը: Վերաքննիչ դատարանի գործի քննության ընթացքում Անահիտ Անյանին սնանկ ճանաչելը մերժելու մասին որոշումը մտել է օրինական ուժի մեջ, սակայն քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանը որևէ կերպ չի հայտնել դատարանին այդ մասին:
Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը, առաջարկեց լսել ներկա գտնվող՝ քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. Կարեն Մխոյանի ներկայացուցիչ Դիաննա Անտոնյանից,«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.07.2018թ-ին ստացված դիմումը քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանի գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել, քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի և 47-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

3.Սույն եզրակացությունը հրապարակել Կազմակերպության ինտերնետային կայում եռօրյա ժամկետում:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան